



AYEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ, և Կ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրթական պարբերաբեր

Ա. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1939

ԹԻԻ 8



Ով որ ասանկ տոգմեն մէկը ընդունի իմ անունովս, զիս կ'ընդունի. և ով որ զիս ընդունի, չէ թէ զիս կ'ընդունի, հապա զիս յիշողը:

ԻՆՁ ԿԸ ԳՐԵՆ ՍԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԸ

Պատ. Խմբագրութիւն «Աւետարանի Ձայն»ի

Պատահամբ ձեռքս անցաւ «Աւետարանի Ձայն»ին մէկ թիւը ու աչքէ անցուցի պարունակութիւնը: Հոգեւոր ամսաթիւրներու եւ կամ աւելի ճիշդ կ'ըլլայ ըսել օրաթիւրներու հրատարակութիւնը խիստ պէտք մըն է այսօր հայ իրականութեան մէջ: Հատուածական ու քաղաքական քրօքականտի համար ի՞նչ որոշ զոհողութիւններ ու աշխատանքներ կը տարուն ամէն տեղ, աշխարհի մէկ ծայրէն՝ միւսը, իսկ հոգիներու վերաշինութեան եւ անոնց փրկութեան համար թափուած ջանքը՝ աննշան:

Կը զնահատեմ Ձեր տոյն ձեռնարկը եւ կը մաղթեմ արդիւնաւոր յաջողութիւն: Փափաքելի է ինծի համար «Աւետարանի Ձայն» ամսաթիւրի հրատարակուած թիւերը ունենալ, եւ կ'ուզեմ որ զիս քաժանորդ արձանագրէք... Ողջունիւ եւ սիրով աղօթարար:

Հալէպ

ՆԵՐՍԷՍ ՔՃՆ. ՊԱՊԱԵԱՆ

Վեր. Խ. Սարեան

Սիրելի եղբայր,

Ձեր ամսաթիւրը ստացայ շատ շնորհակալ եմ, խնդրեմ շարունակեցէք զրկել: Շատ օգտակար թերթ մըն է ան, որուն շարունակութիւնը կրնայ ունենալ մեծ օգտակարութիւն պայքարելու դարուս մոլոր ուսուցումներուն դէմ: Ձեր պայքարը բարձր եւ Աստուածահաճոյ է: Եթէ մարդիկ լրջօրէն եւ առանց կանխակալ համոզումներու ուսումնասիրեն Սբ. Գիրքը, Տէրը պիտի առաջնորդէ զանոնք ճշմարտութեան: Սիրալիք բարեւներով:

ՌԹՈՆ ՃԵԼԱԼԵԱՆ

Ազգապետ Հայ Աւետ. Եկեղեցեաց - Իսթանպուլ

Տէրոջմով Սիրելի եղբայր Սարեան

Յարգելի խմբագիրներ

Ուրախութեամբ ստացայ «Աւետ. Ձայն» ամսաթիւրը: Կը շնորհաւորեմ ձեզ եւ ձեր սկսած գործը, մեր փառաւորեալ Տէրոջը անուան սիրոյն համար: Տէրը յաջողութեամբ պսակէ ձեր ջանքերը Անոր թագաւորութեանը հոգիներ շահելու: Ուստի իմ կողմէս կը մաղթեմ բոլոր սրտովս, եւ իմ ձերութեանս ակար ծայնովը լինելով ձեզ աղօթակից ձեր յաջողութեան համար, եւ ուրախակից ձեր խնդութեան մէջ: Արդ, արժարձեցէ՛ք մեր պաշտելի Տէրոջ սէրը «Աւետարանի Ձայն» ով եւ Անոր փառապանծ յաղթութիւնը Խաչի ճամբով: Տէրը կայնի Ձեր աջ կողմը իրրեւ օգնական եւ ըլլայ ձեռնառն արդիւնալից յաջողութեան: Թող Տէրը փառաւորուի եւ մեծանայ ձեր բոլոր ձեռնարկներուն մէջ:

Բարիկ

Տէրոջմով Ձեր եղբայրը

ԳԱՓՐԻԷԼ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Տէրոջմով Սիրելի եղբայր

Կիրակոս Թումանեան

Ամէն բանէ առաջ, ամէն բանի համար եւ ամէն տուն փառք եւ գոհութիւն ըլլայ Հօրը, Որդւոյն եւ Սբ. Հոգւոյն:

«Աւետ. Ձայն»ը ստացած եմ, Տէրը տայ որ ճիշդ անունին պէս ըլլայ եւ անոր միջոցաւ շատեր փրկուին եւ շատեր ալ օրհնուին: Թերթէն ինծի զրկելուդ համար շատ շնորհակալ եմ:

Պէյրուք

Մնամ աղօթքով, եղբայրդ Անով

Գ. Պ. ՊԱԼԻԲԵԱՆ



ԱՄՍԱՐԵՐԸ
AVEDARANI TSAIN

An Armenian Religious Monthly

Propr. Rev. K. T. SARIAN

Արտոնատէր՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ

Խմբագիրներ՝ Խ. Թ. ՍԱՐԵԱՆ, և Կ. Թ. ՌԻՄԱՆՅԱՆ

Ոչ - յարանուանական և անկախ կրօնական պարբերաբեր

Ա. ՏԱՐԻ

ՕԳՈՍՏՈՍ 1939

ԹԻԻ 8

Ինչպե՞ս կարելի է արթնութիւն մը

Մեր երկրորդ յօդուածով ոչխար տեցանք, ցոյց տալ լայնատարած արթնութեան մը կարելիութիւնը, և տեսանք թէ զանազան տեղերու և տարբեր ժամանակներու մէջ անիկա տեղի ունեցած է Պէնտէկոստէէն սագիին՝ երբ մարդիկ տագնապի մէջ էին քաղաքական, տնտեսական և բարոյական։ Այս օրերս ոչխարի տագնապը նախընթացը չունի իր ահաւորութեանը տեսակէտէն, գեհնային պատերազմի մը արհաւիրքը, Դեմոկրեան սուրի նման կախուած կը մնայ մարդկութեան գլխուն վրայ։ Պետական մարդիկ իրենց կարելին կ'ընեն շատ-շատ յապաղեցնելու համար անխուսափելին, այսուամենայնիւ անոնք կը խոստովանին՝ թէ գալիք աղէտը միայն Աստուած կրնայ արգելել, զրկելով կրօնական մեծ արթնութիւն մը։ Հոս կրկնենք նախագահ Րուզվէլթի խօսքերը մեր ընթերցողներուն մօտին մէջ թարմացնելու համար զանոնք։ Ան կ'ըսէ, «Կրօնական շարժումէ աւել

ի մեծ բան մը պէտք չէ մեր երկրին համար։ (Մ. Խ. Ինչո՞ւ չըսել ատիկա բոլոր ոչխարի համար)։ Կը կասկածիմ թէ գոյութիւն ունի որեւէ խնդիր՝ ընկերային, քաղաքական, տնտեսական որ չկարենայ հալիլ հոգեւոր զարթնումի մը կրակին առջեւ»։ Դրեթէ միեւնոյն բաները կ'որոտայտէ Անգլիոյ պետական մեծ մարդերէն Լոյս Ճօրճ երբ կ'ըսէ, «Միակ բանը որ զաշխարհ կրնայ փրկել կործանումէ, և ազգերը՝ համաշխարհային աղէտէ մը, որ ստորոգութիւնով և ահագնութեամբ շատ աւելի մեծ պիտի ըլլայ քան ոչխարի պատմութիւնը երբեք արձանագրած ըլլայ նմանը, քրիստոնէական կրօնքի ընդհանուր զարթնումն է»։

Երբ դիւանագիտական ոչխարի մէջ, միջազգային համբաւ վայելող երկու պետական մարդիկ այսպէս կը խորհին ու կը խօսին և մանաւանդ հաւատք ունին կարելիութեանը այսպիսի արթնութեան մը, ինչ ըսել հա-

ւտտացեալ կոչուածներու թերահաւատութեանը՝ արթնութեան մը մասին: Բայց անցնինք և ըսենք թէ ինչպէս կարելի է մեծ արթնութիւն մը:

Նախ՝ անհրաժեշտ է բռնել փափաք մը առ այդ. — Երբ մենք անգամ մը գիտակցինք հզօր արթնութեան մը անհրաժեշտութեան վրայ, անիկա պիտի յառաջացնէ մեր մէջ սաստիկ փափաք մը այդ արթնութիւնը ունենալու համար: Եւ այդ փափաքը մեր մէջ այնքան պիտի զօրանայ որ, ուրիշ մարմնաւոր փափաքներ պիտի դադարին մեզ հրապուրելէ, ուսելու խմել մոռացութեան պիտի տրուին: Հոստերին հոգին երբ սկսաւ լուսաւորուիլ՝ երկնային լոյսով, և իր շուրջը տեսած զազիր մեղքերէն իր սիրտը այրիլ, ամէն ինչ աչք տուաւ պապականութեան ապականիչ ու անհղ հոսանքին դէմ:

Ճօն Նաթաի զգացած ներքին հոգեկան ցաւը այնքան սաստիկ էր՝ որ իր հոգւոյն խորերէն կ'աղաղակէր, «Տէր, տուր ինծի Սկովտիան, թէ ոչ կը մեռնիմ»: Եւ Սկովտիան սկսաւ շարժիլ մինչեւ տխրահուշակ Մէյրի Սթուարդին նստած գահը: Երբ Ճօն Ուէսլէյ սաստիկ կը տառապէր սրտին մէջ, այդ ցաւը կ'ստիպէր զինքը ըսելու. «Ձեմ կրնար ապրիլ, եթէ չտեսնեմ թէ հոգիներ կուգան Աստուծոյ»: Եւ Տէրը շարժեց Անգլիան և այն տանն տեղի ունեցաւ, տեսակէտով մը մեծագոյն արթնութիւնը՝ ճանչցուած պատմութեան մէջ, և Անգլիան փրկեց քաղաքական արիւնայի յեղափոխութենէն: Հոգիներու փրկութեան բռնունքով ճանաչեց բռնուած Դաւիթ Պրէյնըրտ կ'ըսէր, «Կարեւոր չէ ինծի ո՛ւր և ինչպէս ապրիլս, կամ ինչ տեսակ դժուարութիւններէն անցնիլս, միայն թէ Յիսուսի համար հոգիներ չահիմ: Երբ կը քնանամ՝ անոր վրայ կ'երա-

զեմ, երբ արթուն եմ, առաջին մտածումս այս մեծ գործն է: Բոլոր փափաքս հեթանոսներուն փրկութիւնն է, և բոլոր յոյսս Աստուծոյ վրայ է»: Այդ սաստիկ կրակը իր մէջ՝ կը մղէր զինքը ժամերով աղօթելու և վերջապէս այրեց զինքը, և մոմի մը նման շիջեցաւ դեռ ծաղիկ հասակին մէջ, սակայն հասաւ իր փափաքին: Ուրիշ մը որ բորբոքած էր միեւնոյն կրակով՝ և որ կը կոչուի Ճօն Սմիթ, տեսէ՛ք ինչ կ'ըսէ, «Ես սիրտը կոտրած մարդ մըն եմ, ինծի համար չէ, այլ ուրիշներուն համար: Աստուած ինծի անմահ հոգիներու արժէքին վրայ այնպիսի տեսիլք մը տուած է՝ որ չեմ կրնար ապրիլ եթէ հոգիներ չփրկուին»:

Ճօն Հայտ (որ աղօթող Հայտ ալ կը կոչուի) հոգիներու փրկութեան համար այնպէս կը ծանրաբեռնուէր՝ որ օրերով կը մերժէր ուսելիք և խմելիք առնել, շատ զիշերներ կ'անցնէր անքուն՝ աղօթքի մէջ, և տեղի կ'ուսնային արթնութիւններ:

Կը պատմուի քարոզիչի մը համար, թէ երբ գնաց իր մէկ նոր պաշտօնատեղին և գտաւ հոն պող, մեռած և ձեւապաշտ եկեղեցի մը, այս պարագան այնքան շարժեց իր սիրտը՝ որ շարունակ կ'արտասուէր ու կ'ըսէր, «Եթէ արթնութիւն մը չգայ այստեղ ես չեմ կրնար ապրիլ»: Ան յաճախ, ճամբուն վրայ, և ժողովներու մէջ և այլուր, կը տեսնուէր որ կուլար, և Տէրը լրկեց փափաքուած արթնութիւնը և ցնցեց այդ տեղը և շրջակայքը: Եթէ կ'ուզուի արթնութիւն մը, պէտք է բռնել փափաք մը որ երկունքի ցաւերու վերածուի, հալուամաշ ընէ ենթական, գիշեր ու ցորեկ աղաղակել տայ, և պիտի գայ անիկա տարածուն, և արդիւնքով՝ տեսական: Երկրորդ՝ Աստուծոյ առջեւ խոնար-

հիլ եւ մեղեքը խոստովանիլ պէտք է: «Ու իմ անուանովս կոչուած ժողովուրդս եթէ խոնարհիմ ու աղօթք ընեն, ու իմ երեսս խնդրեն և իրենց չար ճամբաներէն դառնան, ես ալ երկինքէն պիտի լսեմ ու անոնց մեղքը ներեմ ու անոնց երկիրը պիտի բժշկեմ» (2 Մնայ. 7:14): «Սակայն հիմա ալ Տէրը այսպէս կ'ըսէ. Ինձի դարձէք ձեր բոլոր սրտովը, ծոմապահութեամբ, լալով ու սգալով ու ձեր սրտերը պատռեցէք... և ձեր Աստծոյն դարձէք, քանզի անկա ողորմած ու գըթած, երկայնամիտ ու բազումողորմ ու չարիքի համար կը զղջայ»: «Սիրոնի մէջ փող հնչեցուցէք, ծոմապահութեան օր որոշեցէք. հանդիսաւոր ժողով քարոզեցէք, ժողովը սրբեցէք, ծերերը հաւաքեցէք, տղաքներն ու կաթնկեր մանուկները ժողովեցէք, փեսան իր սենեակէն ելլէ, և հարսը իր առագաստէն: Տէրօջը պաշտօնը կատարող քահանաները, սրահին ու սեղանին մէջտեղ թող լին» (Յովել 2:12:17): «Ու ես իմ երեսը Տէր Աստուծոյ դարձուցի որպէսզի ծոմապահութեամբ, քուրձով ու մոխիրով աղօթք ու աղաչանք մատուցանեմ, և իմ Տէր Աստուծոյս աղօթք ըրի, խոստովանեցայ ու ըսի մեծ մեղք գործեցիմ... ապստամբ եղանք» եւն. (Դան. 9:3—5): Կա՛յ այսօր մեր մէջ մարգարէական ներշնչով մէկը որ հնչեցնէ այս ահազանգը և հրաւիրէ ժողովուրդը խոնարհելու Տէրօջը առջեւ և մեղքերը խոստովանելու, քուրձ հագուելու, մոխիրի վրայ նստելու, ծոմապահութիւն հաշակելու որպէսզի Տէրը իր երեսը դարձնէ իր ժողովուրդին՝ փրկելու, օրհնելու և յաղթական ընելու զայն: «Տէրօջը ձեռքը փրկելէն չկարճցաւ... ձեր մեղքերը անոր երեսը ձեզմէ ծածկեցին» (Ես. 59:1,2): Եկեղեցիներէն ներս սպրդած մինչեւ

իսկ ազատ մուտք գտած մեղքեր կան, պէտք է խոստովանիլ զանոնք եզրուսի և Դանիէլի նման, և պէտք է եղիայի նման մղել ժողովուրդը որոշելու՝ Աստուծոյ համար:

Երբորդ՝ ջերմեռանդ եւ յարատեւ աղօթքը անհրաժեշտ է: Տէրօջը առջեւ խոնարհելէն և խոստովանութիւններ ընելէն ետքը Աստուծոյ անխախտ խոստումներուն կաթնած հաւաստի աղօթքով խնդրել պէտք է զայն: Հնդկաստանի մէջ կրօնական համագումարին նախօրէին Ճօն Հայտի գլխաւորութեամբ ուրիշներ ջերմեռանդն կ'աղօթէին Տէրօջը օրհնութեան համար: Ասիկա տեղի կ'ունենար երբեմն համագումարէն մէկ ամիս տաաջ, այսպէս 30 օր շարունակ, և Տէրը կը պատասխանէր անոնց հոգեւոր անձրեւներով իրենց խնդրածէն և երեւակայածէն աւելի: Ֆիննիյի ժամանակ, Ամերիկա, տեղի ունեցած է դէպք մը որ կը յիշեցնէ եղիայի աղօթքն ու պատասխանը: Երկարատեւ երաշտ տեղի ունեցած էր, հաւնաքը կորստեան վտանգի մէջ էր, և մարդիկ կը տառապէին անհնարին նեղութեամբ: Կիրակի օր մը Չարլզ Ֆիննի եկեղեցի գնաց պաշտօնը վարելու: Չկար որեւէ նշան անձրեւի, ժողովուրդին տառապանքը սաստիկ էր: Պաշտօնեան յոյժ ջերմեռանդ աղօթքով սուպէս խնդրեց. «Չենք յանդգնիր, ով Տէր, ծանուցանել քեզ թէ ինչ բան լուսագոյն է մեզի համար, սակայն և այնպէս դու կը հրաւիրես մեզ իրեւ զաւակներդ քեզի գալ և իբրեւ մեր հօրը քեզի պատմել մեր բոլոր կարօտութիւնները: Անձրեւի կարօտ եմ, Տէր, մեր արօտալայրերը չորցած են: Արջառները կը բառաչեն և ի խնդիր ջուրի ասդին անդին կը թափառին... անոնք պիտի մեռնին և մեր հունձքը պիտի ոչնչանայ: Ով Տէր անձրեւ զրկէ մե-

դի, և հիմա զրկէ՝ Թէպէտ մենք չենք տեսներ անձրեւի նշան, սակայն քեզի համար դժուար գործ չէ այս: Տէ՛ր, հիմա զրկէ զայն ի սէր Քրիստոսի»:

Վերջացուց աղօթքը և սկսաւ քարոզել: Քարոզը դեռ չէր աւարտած, և ահա անձրեւն իջաւ հեղեղներով: Յայնժամ դադար առաւ ըսելով, «ՉԱստուած փառաբանենք անձրեւին համար», և Աստուծոյ ողորմութեան համար առաջարկելով շնորհակալութեան երգ մը՝ երգեց զայն գրեթէ միայնակ մինչդեռ ժողովուրդը կ'արտասուէր:

Արդեօք Աստուած կարող չէ հո-

գեւոր հեղեղներ թափել մեր անջրդի և անապատային կեանքերուն վրայ ալ: Ոչ թէ միայն կարող է այլ կարօտը կը քաշէ զրկելու առատ անձրեւներ, եթէ լրացնենք պայմանները, վճարենք գինը և խնդրենք զայն ի սրտէ՝ «Ով Տէր, միթէ ետ պիտի չդառնաս, ու մեզ պիտի չկենդանացնես, որպէսզի քու ժողովուրդդ քեզմով ուրախ ըլլայ» (Սաղմ. 85:6): Այո՛, Տէր կենդանացուր բոլ գործդ ամեն տեղ եւ այժմ: Ամեն:

Խ. Թ. Ս.

Ընթանեկան Աղօթք

Որպէս քրիստոնեայ ծնողք մեր ամենանուիրական պարտականութիւններէն մին է ընտանեկան խորանին կանգնուած մեր ընտանեկան յարկերէն ներս: Ասիկա միակ ամենաազդեցիկ կերպն է (որուն տեղը ուրիշ բան մը չի կրնար բռնել) որով կրնանք մեր զաւակները առաջնորդել Յիսուս Քրիստոսի փրկութեան և միեւնոյն ժամանակ ստեղծել հոգեւոր մթնոլորտ մը մեր ընտանիքին մէջ: Խսկապէս որքան գովելի են այն հաւատացեալ ծնողքները որոնք իրենց զաւակները օրուան որոշ մէկ ժամուն կը հաւաքեն իրենց և Աստուծոյ խօսքին շուրջը, հոգալու համար անոնց հոգեկան անունդը ինչպէս որ կը հոգան անոնց մարմնաւոր անունդը: Սակայն շատ ցաւալի է որ շատ մը հաւատացեալ ընտանիքներու մէջ զանց առնուած է այս կարեւոր պարագան շատ պարզ և չնչին պատճառներով, և հետեւաբար իր բացարձակ կարեւորութիւնը կորսնցնուցած է անոնց համար: Ընտանեկան պաշտամունքի կատարման մեծ դերին մասին պիտի չխօսիմ, քանզի

ամէն հաւատացեալ ծնողք գիտէ այդ ճշմարտութիւնը, այլ պիտի ընեմ մի քանի պարզ թելադրութիւններ անոր գործադրութեան մասին:

1. Ընթանեկան պաշտամունքի համար որոշ եւ մասնաւոր ժամանակ մը պէտք է յաւակացուի:

Ընտանիքի անդամներուն համար ամենալարմար առեւնը ե՛րբ է, այն ժամը որոշ կերպով թող յատկացուի այս նպատակին համար և այն որոշեալ ժամը չգրաւուի ոեւէ ուրիշ բանով մը: Ընտանիքի մէկ կամ միւս անդամին դիւրութեան համար այդ որոշ ժամանակը տտեն-տտեն փոխել մեռցնել ըսել է այս սրբազան քրիստոնէական պարտականութիւնը: Որպէսզի բոլոր անդամները ներկայ գտնուին ամէն օր ժամանակը փոխելու տեղ, աւելի նախընտրելի է ճիշդ որոշ ժամանակի մէջ ընել զայն, թէեւ անդամներէն մէկը կամ միւսը բացակային այդ օրուան համար:

2. Ընթանեկան պաշտամունքի ժամանակը թող երկայն չըլլայ:

Երբեմն ծնողքներէն ոմանք իրենց

պզտիկները ձանձրացնելու չափ ընտանեկան պաշտամունքը երկայն ընելու սխալին մէջ կ'իյնան: Այս բանին մէջ միշտ կարճը աւելի նախընտրելի է երկայնէն: Ամենէն երկայն ժամանակը որ կը յատկացուի այս նպատակին՝ 15 վայրկեանէն աւելի ըլլալու չէ:

3. Ընտանեկան պաշտամունքին մեջ զանազանութիւն պէտք է ըլլայ:

Եթէ ընտանեկան պաշտամունքը կարճ քարոզի մը կամ պատուիրանքներու շարքի մը վերածուի, և կամ հօր պաշտօնը խօսիլ և միւսներուն ալ մտիկ ընել ըլլայ, պաշտամունքը տաղտուկ կը պատճառէ և շատ օգտակար չի կրնար ըլլալ: Իրական և տիպար ընտանեկան պաշտամունքին մէջ ընտանիքին անդամներուն բոլորն ալ կը մասնակցին և բոժին կ'ունենան: Ամէնուն ձեռքը և նոյնիսկ պզտիկներուն ձեռքն ալ Աստուածաշունչ կը գտնուի: Ամէնքն ալ ընթերցման կը մասնակցին մէյմէկ համար կարդալով: Ամէնքը միասին կ'երգեն: Տէրունական աղօթքը միասին կ'ըսեն: Երբեմն կը պատահի որ պզտիկներուն ալ մէյմէկ կարճ աղօթք ընել տալ հարկ կ'ըլլայ: Այսպէս ընտանիքին անդամներուն ամէնքն ալ պաշտամունքի մասնակից կ'ըլլան: Այս պաշտամունքին բուն նպատակը՝ պզտիկները յանդիմանել և շարունակ խրատել չէ, հապա միասնաբար զԱստուած պաշտել և այս կերպով զիրենք առաջնորդել Յիսուս Քրիստոսի փրկարար զօրութեան, ճանչցնելու համար: Ձինքը իբրեւ իրենց անձնական Փրկիչը:

4. Ընտանեկան պաշտամունքի համար ամենայնաւոր ժամանակը ե՞րբ է:

Ասոր համար ամենայնաւոր ժամանակը կամ նախաճաշէն անմիջապէս առաջ և կամ ալ ընթրիքէն անմիջապէս վերջն է: Ամէն ընտանիք իրեն

ընտանեկան պարագաներուն և դիւրութիւններուն համեմատ կրնայ այս երկու ժամանակներէն մէկը յարմար գտնելով որոշել սոյն նպատակին համար: Ընդհանրապէս առաւօտեան ժամանակը աւելի յարմար կը նկատուի: Եթէ երկրորդը նախընտրուի, ընթրիքէն անմիջապէս վերջը, երբ դեռ պնակները չեն վերցուած, և երբ դեռ բոլոր անդամները սեղանին շուրջը կը գտնուին, պէտք է ամէն մէկուն Աստուածաշունչը բերուի և պաշտամունքը կատարուի, որովհետեւ երբ որ անդամները մէյ մը սեղանէն ելլեն զիրենք կրկին անգամ հաւաքել քիչ մը դժուար կ'ըլլայ և ժամանակ կ'առնէ:

5. Ընտանեկան պաշտամունքը ո՞վ առաջնորդելու է:

Բնական է որ պաշտամունքը առաջնորդողը ընտանիքին հայրը կ'ըլլայ, քանզի ընտանիքին մեծը ու անոր գլուխը ինքն է: Սակայն անոր բացակայութեան այդ պարտականութիւնը կ'իյնայ մօր վրայ: Նոյնիսկ հօր ներկայութեան եթէ աղօթքը երբեմն մօր կողմէ մատուցուի՝ շատ լաւ կ'ըլլայ:

6. Ընտանեկան պաշտամունքի ժամանակ Աստուածաշունչին ընթերցման համար ի՞նչ մեքոս գործածելու է:

Մեթոտները շատ են: Օրինակի համար, Աստուածաշունչի առաջին գիրքէն սկսելով կրնայ գլուխ առ գլուխ կարդացուի: Առօրեայ ընթերցումներու համար Աստուածաշունչէն հատուածներուն ցուցակը կայ, անոր կրնայ հետեւուիլ: Այլեւս ինչպէս որ յարմար դատուի այդ կերպը կրնայ գործածուիլ:

Սիրելի հաւատացեալ ծնողքներ, սորվինք ու գիտնանք ընտանեկան պաշտամունքի կարեւորութիւնը, և անոր հաւատարիմ ըլլանք: Եթէ ասոր մէջ թերանանք, թերացած պիտի ըլ-

ՄԲ. ԳԻՐՔ ԵՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ

(Շաբուհակոբիւն նախորդ քիւեճ)

Ինչպէս ըսած եմ, կրկին ըսեմ թէ, գիտութիւնը հազարաւոր տարիներ ետքը ինչ որ կ'ըսէ, Սբ. Գիրք կանխելով զանոնք ըսած է արդէն հազարաւոր տարիներ առաջ: Յոբ (Մովսէսէն ալ առաջ ապրող մէկը) հազարաւոր տարիներ առաջ, առանց հեռագիտակի և կամ գիտական նուրբ գործիքի, ըսաւ թէ, «Երկիրը պարապութեան վրայ տարածուած և ոչինչի վրայ կախուած է» (Յոբ. 26: 7): Յոբ ինչպէս հասկցաւ ձգողական զօրութեան գոյութիւնը, որ պիտի պահէր մեր վիթխարի գունդը այդպէս օդին մէջ կախուած, առանց կռթնած ըլլալու տեղ մը: Դուք գիտէք այն զանազան մարդկային վարկածները, թէ աշխարհ կը կենայ փիղի մը կռնակին վրայ, կամ գոմէշի մը եղջիւրին վրայ, առանց մեզի ըսելու թէ անոնք ո՛ւր կը կենան: Հնդիկները կ'ըսեն, թէ անիկա փիղի մը վրայ կը կենայ, փիղը մեծ ձուկի մը վրայ, և ձուկը ծովու վրայ: Հոս գէթ կռթնելու տեղ մը տրուած է, սակայն Յոբ այսօրուան գիտութեան ըսածն է որ ըսած է 3,500 տարի առաջ: Ո՛ւսկից գիտէր Յոբ: Ան չէր գիտեր, սակայն Տէրը գիտէր, և

լանք մեր ծնողական այս ամենաարագան պարտականութեան մէջ և հետեւաբար մեր զաւակներուն հոգեւոր ապագային վերաբերեալ կ'ըլլանք: Ուրեմն, նկատելով որ ասիկա մեզի շնորհուած աստուածային ամենամեծ հոգեւոր առանձնաշնորհումներէն մին է, ջանանք մեր այս պարտականութեան մէջ հաւատարիմ գտնուելու:

Վեր. ԹԷՈՏՈՐ Ե. ՏԱՂԼԵԱՆ

այսպէս գրել տուաւ:

Այս բոլորը զուգադիպութիւններ են: Մարգարէն մէկը հարցուցեր է ըսկեպտիկի մը, եթէ բարձր տեղէ մը իյնաս և անվնաս ազատիս, ասիկա ինչի՞ կը վերագրես: — Կ'ըսէ, հանդիպումի եթէ երկրորդ անգամ իյնաս և դարձեալ չվնասուի՞ս: — Կ'ըսէ, հրաշք կ'ըլլայ: Հապա եթէ երրորդ անգամ իյնաս՝ կրկին չվնասուի՞ս: — Ան աստիճանովորական կ'ըլլայ կ'ըսէ: Հիմա մենք ալ երկուքէն աւելի զարմանալի պարագաներ յիշեցինք Աստուծոյ խօսքէն, որոնք զուգադիպութեամբ չէին կրնար պատահիլ, այլ բնականօրէն Աստուծոյ միջամտութեամբ:

Աստուծոյ շոգիացումի օրէնքը չէր գիտեր. սակայն խօսեցաւ անոր մասին երբ կը գրէր. «Ամէն գետեր ծովը կ'երթան, բայց ծովը չի լեցուիր (և մէկ մատնաչափ իսկ չաւելնար): Ինչո՞ւ: Որովհետեւ (կ'ըսէ) այն տեղը ուր գետերը կ'երթային նորէն հոն կ'երթան, այսինքն կը շոգիանան»:

Օր մը դառնկերներէս մէկուն ըսի, հակառակ որ գիտական այսքան յառաջդիմութիւններ կ'արձանագրենք, սակայն Յոբէն աւելի շատ բան չենք գիտեր: «Ի՞նչ ըսել կ'ուզես, ըսաւ ինծի արտնդաւոր, անշուշտ Յոբէն շատ աւելի բաներ գիտենք մենք»: Ըսի իրեն, «Այսօր Յոբին ուղղուած 40 հարցումներ կան, որոնց անկարող ենք այժմ ալ պատասխանել, հրամեցէք եթէ կրնաք, և ասիկա պիտի ըլլայ տեսակ մը քննութիւն և պիտի դրուի նիշեր տրուած պատասխանին համեմատ»:

Ահա այդ հարցումներէն ոմանք, որոնք կը գտնուին Յոբ. 38 և յաջորդող գլուխներուն մէջ. «Ո՞վ կրնայ

ըսել թէ մենք ուր էինք երբ Աստուած
երկրին հիմը կը դնէր», կամ «ո՞վ գի-
տէ անոր չափերը դնողը, ո՞վ քաշեց
լարը անոր վրայ, հիմերը ինչի՞ վը-
րայ հաստատուած են, կամ թէ անոր
անկիւնին քարը ո՞վ դրաւ»։ Ճերբ ա-
ռուօտիան աստղերը փառարանութիւն
կ'ընէին, ո՛ւր էիր դուն»։ Կարելի՞ է
որ մէկը ըսէ թէ ինք ո՛ւր կը գտնուէր
երբ Տէրը երկրին փլանը կը շինէր,
չափերը կը պատրաստէր։ Մարդիկ տա-
կաւին նոր կը հասկնան որ ամէն նիւթ
ձայն ունի, մինչեւ իսկ լոյսը։ Ահա թէ
ինչո՞ւ կ'ըսէ թէ աստղերը փառաբա-
նութիւն կ'ընէին։ Իսկ ձայնը ունի իր
գոյները, ինչպէս լոյսը ունի իր գոյ-
ները։ Անոնք բնական աչքերով և ա-
կանջներով չեն տեսնուիր և չեն լըս-
ուիր, այլ նորոնար փափուկ գործիք-
ներով։ Տակաւին ուրիշ հարցումներ ալ
կ'ընէ Տէրը և կը հարցնէ, «Ո՞վ դրաւ
ծովուն դռներ և փակոնք և ըսաւ
մինչեւ հոս գաս և տսկէ անդին չանց-
նիս»։ Արդարեւ երբեմն իրենց սահման-
ներէն քիչ մը աւելի անդին կ'անցնին,
սակայն անիկա մանուկի մը ըրած չա-
րածծիութեան կը նմանի։ Պատմութեան
մէջ միայն մէկ անգամ սահմանը ան-
ցաւ ան ալ ջրհեղեղի ատեն և Աստու-
ծոյ հրամանովը...։ «Ծովուն աղբիւր-
ները մտնո՞ր ես»։ Ինծի անգամ մը
խմցողին ծովուն յատակէն բղրող ա-
նուշ ջուրէն, ոչ իսկ Բաքի լեռներու
մէջ անանկ անուշ և պաղ ջուր մը
խմած եմ։ «Անդունդին ծածուկ տեղե-
րը պտտնո՞ր ես»։ Մարդիկ չափ խո-
րունկ տեղեր չեն կրնար սուզուիլ։
Անգամ մը մտայ ծովուն յատակը սու-
զահանդերձով՝ վախով և դողով, տե-
սայ այնպիսի բոյսեր, կենդանիներ և
տեսարան որ կեանքիս մէջ այնպիսի
բաներու հանդիպած չեմ։ Սակայն ան-
դունդին մէջ չէր որ կը պտտէի, այլ
աւելի ծանծաղ տեղեր, ո՞վ մտեր է

անդունդին ծածուկ տեղերը։

«Ջուրերը քարի պէս կ'ըլլան (այ-
սինքն կը սառնին) ու կը պահուին, ու
անդունդին երեսը կը բռնուի»։ Այն
բանը որ քարի պէս է բնականօրէն
պէտք է ջրամոյն ըլլայ, իսկ ջուրը
քար կը դառնայ և անո ջուրին երե-
սը կը բռնէ։ Ջուրը ինքնին ուսումնա-
սիրութեան ընդարձակ նիւթ մըն է,
առանց ջուրի կեանք գոյութիւն չու-
նի։ Ջուրը շինուած է երկու ջրածին և
մէկ թթուածինէ (H_2O)։ Առաջինը դեւ-
րաբունկելի կազ մըն է, իսկ երկրոր-
դը՝ պայթուցիկ կազ, երկուքն ալ այ-
րով բնութիւն ունին և կրակ կ'արտադ-
րեն, այսուամենայնիւ, ի՞նչ հրաշք,
երկուքը միացուր և կրակին վրայ
թափէ, կրակը կը մարեն, և մեր պա-
պակը և ծարաւը կ'առնեն։

Ի մի բան, կրկնեմ ըսածներս.
յառաջացած է գիտութիւնը, տարա-
կոյս չկայ։ Զանազան անուններով գի-
տութիւններ «էմպիրիօսօֆի» (սողմա-
բանութիւն), «Պայօլօֆի» (կենսաբա-
նութիւն), «Ջօլօֆի» (կենդանաբանու-
թիւն) «Պոպթէրիօլօֆի» (մանրէաբա-
նութիւն) եւն, և զարմանալի նուրը
գիտական գործիքներ, «Թէլէսգօֆի»
(հեռադիտակ), «Մայքրօսգօֆի» (մանրա-
ցոյց), «Սփէքթրօսգօֆի» (լուսակաղէտ)
եւն, այսու ամենայնիւ այս բոլորին ը-
սածները և ըսելիքները Աստուծոյ
խօսքը նախատեսած և կանխաձայնած
է հազարաւոր տարիներ առաջ, իր
մարգարէներուն և առաքելներուն
միջոցաւ։ Անոնք գիտէին այս ամէնը,
ամենեւին։ Սակայն Աստուած գիտէր
և յայտնեց անոնց։ Ոտքին և գիտու-
թեան միջեւ չկայ հակասութիւն, եր-
կուքին հեղինակն ալ միեւնոյն Տէրն
է, եթէ սխալ մը կայ անիկո գիտու-
թեան մէջ է և ոչ թէ Աստուծոյ խօս-
քին մէջ։

(Մնացեալը յաջորդով)

ԱՐԹՆՈՒԹԵԱՆ ՀԵՐՈՍՆԵՐ

ԱՍՏՈՒԾՈՅ ԴՈՐԾԻՆ ՄԷՋ

(Շար. նախորդ թիւին)

Շատ չանցած Պիլլի Պրէյ գէշ վատ-
նուած երիտասարդութեան արգիւնքը
խորապէս զգալ սկսաւ: Խմիչքը տւեր-
նեւ գործած էր իր առողջութեան
վրայ: Կը յիշէր նաև փոսի մը մէջ իյ-
նալով մեռած 19 գինովները: Այս բո-
լոր տխուր յիշողութիւններ՝ խմիչքի
կատարած նախճիրին դէմ՝ իր մէջ
կ'արթնցնէր զօրաւոր հակակրօնութիւն
մը: Կ'ըսէր. «Մարդիկ կ'պիտան նիւթեր
կը գործածեն թռչուն որսալու, Սա-
տանոն կը գործածէ գինիի ու գարե-
ջուրի չիշեր՝ յիմար մարդիկը որսալու:
Խմելու մէջ չափաւորութիւն գործա-
ծելու մասին կ'ըսեր. «Եթէ պառու
կնկան մը գոգնոցը կրնայ արգիլել
խոզերու երամակին գետնախնձորի
արտը մտնելէ, չափաւորութիւնն ալ
կրնայ բուժել մօլի խմողը: Սատանան
գիտէ ստիկա և կը յանձնարարէ քիչ
խմել, զանոնք կրկին որսալու համար»:
Եռեփող ու աշխոյժ բնաւորու-
թիւն ունէր և իր անունը կ'ապուած
էր զուարճաբանութեան և ծիծաղի հետ,
սակայն իր զուարճախօսութիւնը շատ
մօտ էր լացի: Չարաչար աշխատողը
քիչ վարձքով, և չբաւարնելուն յուր
վիճակը և տառապիլը խորապէս կը
տպաւորէին զինքը: Հակառակ որ ին-
քը շատ չունէր և շատ խնայողու-
թեամբ կ'ապրէր, յաճախ կ'օգնէր իր-
մէ խեղճերուն: Կեանքի այս պայքարը
զինքը երբեք չէր տհաճեցր, որով-
հետեւ կ'ըսէր որ՝ Պիլլիին համար
անպատճառ տակաւին մէջ ալիւր պի-
տի գտնուի, և քիչ մըն ալ աղքատ-
ներուն համար: Առիթով մը ան ըսած
է. «Ես թագաւորի մը որդի եմ, 40

տարեկան իշխան մը» և կամ սո՛ր խօս-
քը. «Եթէ Տէրը հրեշտակապետ Միքայ-
էլը անօթի ձգէ, Պիլլի Պրէյն ալ կը
ձգէ»: Օր մը իր հետը տուն բերաւ
քանի մը աղաք ըսելով. «Անոնց մայ-
րը մեռած է և հայրերնին տունէն փա-
խած»: «Սակայն, դիտել կուտայ իր
կինը, մենք արդէն ունինք չորս զա-
ւակներ, անոնք պէտք է երթան որբա-
նոց»: Պիլլիին պատասխանը անդիմա-
դրելի էր, «Հոն զիրենք կերակրող Տէ-
րը հոս ալ կրնայ կերակրել զանոնք»:
Այսպիսի յատկանշական խօսքեր և
պատմութիւններ կը պատմուին ամ-
բողջ Քօրնվօլի մէջ, անոնք այլեւս
գասական դարձած են:

Պիլլիին շնորհակալ ծրագրերը. —

Եկեղեցիներ շինելու տեսակէտէն
ալ Պիլլի Պրէյ անուն մը շահած է:
Այդ նպատակի համար հաւաքուած
գրաւմները, ըրած սակարկութիւններն
ու թափած աշխատանքները եթէ գրի
առնուին, հատոր մը կը կազմեն: Իր
հաւատքն ու ջանքերը ուրացում չեն
ճանչնար, հետզհետէ եկեղեցի եկեղեցի
ետեւէն կը կանգնուէր որոնց թէ գոր-
ծակատարը թէ վարիչը Պիլլի Պրէյ
ինքն էր: Անգամ մը իր շինած մէկ ե-
կեղեցիին համար բեմ մը պէտք էր:
Պիլլի սկսաւ խորհիլ թէ արդեօք ուս-
կից պէտք է ճորել վայն, մանուսնդկ
գրամ ալ չունէր: Սկսաւ փնտռել: Այդ
առթիւ հանդիպեցաւ խանութի մը ուր
կահ կարասիք ածուրդի դրուած էին:
Հոն տեսաւ եռանկիւն դարակ մը. «Ծիշդ
յարմար բռնէ, ըսաւ Պիլլի Պրէյ,
քիչ մը վերէն, քիչ մը վարէն և քիչ

մըն ալ կողերէն կարելի է կարել և կոկիկ բեմի մը յարմարցնել զայն»։ Եւստ ուրախացած յանկարծական այս գիւտէն, քովի մարդուն հարցուց թէ արդեօք ո՛րքան կ'արժէ անիկա— Մարդը աչքերը Պիլլիին յառած, կը խորհիմ թէ 6 շիլինի կուտան ըսաւ։ Պիլլի Պրէյ յայտնեց մարդուն թէ իր նպատակը եկեղեցիի մը համար իբր բեմ գործածել է զայն։ «Ա՛հ, ըսաւ մարդը, դուն Պիլլի Պրէյ ես, ահաւասիկ 6 շիլին գնա առ զայն»։ Քիչ յետոյ աճուրդի դրուեցաւ դարակն ալ, և Պիլլի Պրէյ որ աճուրդին ինչ ըլլալուն վրայ գաղափար չունէր, և դարակը առնելու մեծ փոփաքէն մղուած, «Պարոն, ըսաւ, խօսքը ուղղելով աճուրդի մարդուն, ահաւասիկ 6 շիլին զայն ինծի տուր, ես տնիկա բեմի պիտի վերածեմ»։ Պիլլիին այս խօսքին վրայ մարդիկը բարձրաձայն սկսան խնդալ։ Աճուրդի մարդը վեց շիլինով բացուած նկատեց և կոնչեց, «վեց շիլին, դարակի համար վեց շիլին»։ Անդիէն ուրիշ մը 7 շիլին տուաւ։ «Զէ, ըսաւ Պիլլի, այդ դարակը վեց շիլին կ'արժէ, և ահաւասիկ դրամը»։ Սակայն ահագուտ, միւս մարդը վճարեց 7 շիլին և իր վրան մնաց դարակը։ Պիլլի Պրէյ քիչ մը յուսախաբ, «Հայրը աւելի լաւ գիտէ, վեց շիլինը դարձնամ տէրջը ըսաւ»։ Նայեցաւ շուրջը, բայց մարդը հոն չէր. և տնգամ մըն ալ այդ մարդը չտեսաւ։ Այս պարագան զինքը աւելի տակն ու վրայ ըրաւ։

Ուղղուեցաւ դէպի եկեղեցի, երթամ ըսաւ, պատմեմ Հօրս եղելութիւնը։ Երբ եկեղեցիէն կ'ելլէր, նորոգուած հաւատքով և վստահութիւնով թէ ումէն բան լաւ պիտի ընթանայ, տեսաւ որ դարակը կառքի մը վրայ դրած գնողին տունը կը տանին։ Պիտի հետեւիմ իրենց, խորհեցաւ Պիլլի իւրովի, տեսնելու թէ ո՛ւր պիտի տա-

նին զայն։ Քիչ յետոյ հասան տուն մը և աշխատեցան դռնէն ներս մտնել։ Սակայն ինչ որ ըրին դռնէն ներս չկրցան մտնել զայն։ «Ահա քեզի փորձանք դարակ մը, ըսաւ գնողը բարկացած, 7 շիլին վճարեցի, այրելու համար փայտի տեղ պիտի գործածեմ զայն»։ Պիլլի աչքերը քթթելով և գըլխարկով իր երեսը հովահարելով մարդուն մօտեցաւ ու ըսաւ. «Ես քեզի 6 շիլին կը վճարեմ եթէ զայն զրկես սա եկեղեցիին»։ — Սիրով, ըսաւ մարդը, ուրախացած որ այսպէս չուտ կ'աղատէր փորձանք մը։ Օրհնեալ ըլլայ Տէրը, աղաղակեց Պիլլի. Տէրը միշտ իրեն վայել գործեր կ'ընէ, Ան գիտէր որ ես զանիկա մինչեւ եկեղեցի տանելու կարողութիւն չունիմ, և այս մարդը որոշեց որ ինծի համար կրէ զանիկա»։ (Վերջը յաջորդով)

ԻՐԱՐՈՒ ՀԵՏ ՈՍԱՂԱՂՈՒԹԻՒՆ ՈՒՆԵՑԷՔ

Արեւմտեան Ափրիկէի մէջ գործող միսիոնար մը հետեւելը կը պատմէ։ «Այցելեցի մեր համայնքէն հիւանդի մը և իր կնոջ։ Հարցուցի թէ միտին կ'աղօթե՞ն, Սբ. Գիրք կը կարդա՞ն (կինը գիտեր կարդալ), ժողովներու կ'երթա՞ն, իրենց դրացիներուն հետ լաւ կ'ապրե՞ն։ Այս բոլոր հարցումներու հաստատական պատասխան տուին։ Յետոյ հարցուցի թէ իրենք՝ այր և կին, միասին սիրով կ'ապրե՞ն։ Մարդը պատասխանելով ըսաւ, «Երբեմն ես խօսք մը կը խօսիմ, զոր կինս չի սիրեք, երբեմն ալ կինս խօսքեր կը խօսի և գործեր կ'ընէ, զորս ես չեմ սիրել։ Սակայն խնդիրը երբ կ'ուրիշ հասնի, մենք իրարու հետ ձեռք կը թոթվենք, կը գոցենք դուռը, կ'աղօթենք, և այսպէս դարձեալ խաղաղութիւն կ'ունենանք»։



ՄԵՐ ՀԱՅ ԵՐԿՍԵՆԻ ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒՆ



ՄԷԿԸ ԻՆՉՊԷՍ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ Կ'ԸԼԼԱՅ

— Մայրիկ, ի՞նչպէս քրիստոնեայ կրնամ ըլլալ, հարցուց Մարիանա իր մօրը, երբ խոհանոցին մէջ կ'օգնէր անոր:

Իր մայրը զբաղած էր կէսօրուան ճաշը պատրաստելու, սակայն զգաց թէ այդ հարցումը կենսական էր և պէտք էր անմիջապէս իր պատասխանը ստանար:

— Շատ ուրախ եմ աղջիկս այդ հարցումը ընելու համար, ըստ մայրը: Հիմա միասին նայինք Սբ. Դիրքին և տեսնենք թէ Աստուած ի՞նչ կը խօսի այդ մասին մեզի՝ իր խօսքին մէջ:

Անմիջապէս քով քովի նստան մէյ մէկ Սուրբ Դիրք իրենց ձեռքը ունենալով:

Նախ կարդանք Հռ. 3:23ը, և բանալով կարդացին, «Վասնզի ամենք մեզք գործեցին և Աստուծոյ փառքէն պակսած են»:

— Բանի՞ հոգի մեզք գործեցին:

— Բանի՞ հոգի, ամէնը—աշխարհի վրայ որքան որ մարդ կայ—պատասխանեց Մարիանա:

— Այդ ամէնուն մէջ դուն ալ կ'ա՞ս, հարցուց մայրը:

— Այո՛, պատասխանեց Մարիանա:

— Ուրեմն կարդա համարը անգամ մը եւս, իբր թէ ան խօսած ըլլայ միայն քեզի համար, շարունակեց մայրը:

Աղջիկը կարդաց, «Վասնզի եւ մեզք գործեցի և Աստուծոյ փառքէն պակսած եմ»:

— Հիմա դառնանք Յովհ. 1:29ին, ըստ մայրը, և միասին կարդացին. «Ահա Աստուծոյ զառը որ աշխարհի մեզքը կը վերցնէ»:

Գիտե՞ս աղջիկս, թէ ի՞նչ կը նշանակէ այդ «ահա» բառը, հարցուց մայրը:

— Ո՛հ, այո՛, «տե՛ս» կը նշանակէ կարծեմ, այդպէս չէ՞:

— Այդպէս է, պէտք է նայիլ Տէր Յիսուսի որ այդ համարին մէջ կոչուած է «Աստուծոյ զառը»: Հ. Ուրեմն ատենները դառնուկները կը զոհուէին և անոնց արիւնը մեզքի համար քառութիւն էր մինչեւ մեր Տէր Յիսուսի (ճշմարիտ զառին) աշխարհ գալը և ինչին վրայ մեռնիլը: Աստուած կ'ըսէ որ երբ Տէր Յիսուս մեռաւ ինչին վրայ, Ան վերցուց աշխարհի մեզքը, կը հաւատաս ապոր աղջիկս:

— Այո՛, բոլոր սրտովս կը հաւատամ մայր, թէ Յիսուս մեռաւ աշխարհի մեղքերուն համար:

— Սակայն կը հաւատաս թէ Ան մեռաւ քեզի համար:

— Ինձի համար, ատիկա ի՞նչպէս կրնամ գիտնալ, ըստ Մարիանա:

— Դուն երկինքն ես, հարցուց մայրը:

— Ո՛հ, ոչ, երանի թէ հոն ըլլայի:

— Դժոխքի մէջ ես:

— Ո՛հ, կը յուսամ թէ հոն երբեք պիտի չերթամ, ըստ Մարիանա:

— Հրեշտակ մըն ես թէ ոչ Ստատանայ մը, կրկին հարցուց մայրը չը-
փոթութեան մատենելով Մարիամնան:

— Ո՛չ մին, ոչ ալ միւսը, պա-
տասխանեց Մարիամնան, չգիտնալով
թէ այս հարցումները ո՛ւր պիտի յան-
գին:

— Լաւ, տիեզերքի ո՞ր մասին կը
պատկանիս:

Վայրկեան մը Մարիամնան շուտ-
րած կը մնայ, յետոյ կ'ըսէ, այս աշ-
խարհի կը պատկանիմ:

— Այո՛, կ'ըսէ մայրը, իրաւ է: Եւ
«Աստուած այնպէս սիրեց այս աշխար-
հը, մինչեւ իր միտքին Որդին տուաւ,
որպէսզի ամէն ով որ հաւատայ՝ չկոր-
սուի, հապա յաւիտենական կեանք ու-
նենայ» (Յովհ. 3:16): Ուրեմն Ան քեզի
համար ալ մեռած է:

— Այո՛, մայր, այժմ կը տեսնեմ,
որ ինծի համար ալ մեռած է, որով-
հետեւ, ես ալ աշխարհի մէջ եմ, որուն
համար զրկուեցաւ Ան:

— Արդ, պատրաստ ես կարգալու
միւս համարը:

Աղջիկը սկսաւ կարգալ, «Բայց
որոնք որ զինքը ընդունեցին, անոնց
իշխանութիւն տուաւ Աստուծոյ որդի-
ներ ըլլալու, որոնք կը հաւատան իր
անուն» (Յովհ. 1:12):

— Եթէ կը հաւատաս որ Ան մե-
ռաւ եւ մեղքերուդ համար պէտք է
ընդունիս Տէր Յիսուսը իբր Մէկը որ
մեռաւ Խաչին վրայ եւ տեղդ, վերցնե-
լով եւ մեղքերդ Պատրաստ ես այդ-
պէս ընելու:

— Այո՛, ըսաւ Մարիամնա, որ-
ցունքները աչքերուն մէջ, ես կ'ըն-
դունիմ Տէր Յիսուսը որպէս իմ անձ-
նական Փրկիչս:

— Ուրեմն յիշեալ համարին հա-
մեմատ ի՞նչ եղած կ'ըլլաս:

— Իր զաւակը, անմիջապէս պա-
տասխանեց Մարիամն:

— Այո՛, իմ սիրելի աղջիկս այժմ
իր զաւակն ես, որովհետեւ Աստուծոյ
խօսքը այդպէս կ'ըսէ: Զե՛ս ուզեր գո-
հութիւն յայտնել Աստուծոյ:

— Այո՛, մայր իմ, կը փափաքիմ
գովել Տէրը, այս մեծ ողորմութեան
համար:

Միասին ծնրադրեցին և սրտանց
փառաւորեցին Տէրը:

Կ'ուզէինք հարցնել մեր սիրելի
պատանիներուն թէ արդեօք իրենք ալ
այս աղջկան պէս ընդունած են Յի-
սուսը իբր իրենց անձնական Փրկիչը:
Եթէ ընդունած չեն, պիտի չփափա-
քէին կարգալ վերոգրեալ համարնե-
րը, որոնք ցոյց կուտան թէ ի՞նչպէս
պէտք է հաւատալ, այսինքն թէ ի՞նչ-
պէս նամարիս երեսնեալ մը ըլլալ:

Թարգ. Խ. Թ. Ս.

ԱՆՀԱՒԱՏ ԲԺԻՇԿ ՄԸ

Անհաւատ բժիշկին մէկը քարո-
զիչի մը կը հարցնէ՝ թէ արդեօք հո-
գիններու փրկութեան համար կ'աշխա-
տի՞: Այո՛, պատասխան կուտայ քարո-
զիչը: Խնդրեմ ինծի ըսէք, կ'ըսէ բը-
ժիշկը, թէ արդեօք հոգի մը տեսած
էք: Զէ, կ'ըսէ պաշտօնեան: Միթէ հո-
գիի ձայն լսած էք, հոգիի համը ա-
ռած էք, կամ հոտը առած էք, կը
հարցնէ կրկին բժիշկը: Քարոզիչը
ժխտական կերպով կը պատասխանէ
այդ հարցումներուն: Վերջին անգամ
մըն ալ կը հարցնէ բժիշկը, թէ հոգիի
մը գոյութիւնը արդեօք զգացած է,
որուն՝ այո՛, կը պատասխանէ քարոզի-
չը: Ուրեմն, կ'ըսէ բժիշկը, հինգ ըզ-
գայարաններուն չորսը մէկին դէմ կը
վկայեն թէ հոգի չկայ:

Քարոզիչը իր կարգին կ'սկսի
հարցապնդել բժիշկը թէ արդեօք ին-
քը ցաւերը բժշկո՞ղ է: Այո՛, կը պա-

տասխանէ բժիշկը՝ Միթէ ցաւին ձայնը լսած էք, ցաւին համը առած էք, ցաւը հոտոտած էք: Այս բոլորին ոչ կը պատասխանէ բժիշկը՝ Արդեօք դուք ցաւը զգացած էք, կը հարցնէ քարոզիչը Այո՛, կը պատասխանէ բժիշկը՝ Ուրեմն, կ'ըսէ քարոզիչը, հոս

ալ հինգ զգայարաններուն չորսը մէկին դէմ կը վկայեն թէ ցաւ չկայ, և սակայն Պր. Բժիշկ դուք գիտէք որ ցաւ կայ, ու եր ալ գիտեմ որ հոգի կայ:

Քաղեց՝ ԱԻԵՏԻՍ ԱՅԳԱՐԵԱՆ

Հելիոպոլիս

ՀԱՐՑՈՒՄ ԵՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Հարց.— Առաջ. 24:9ին մէջ կ'ըսուի թէ, «Յիմարութեան խորհուրդը մեղք է», այս կը նշանակէ՞ թէ՝ եթէ մէկը յիմարական խորհուրդ մը ունենայ՝ կը մեղանչէ:

Պատ.— Սոյն համարը չփոթեցուցած է շատերը, և դժուարութիւնը կը կայանայ համարին թիւը մեկնութեան մէջ: Մեծանուն մեկնիչ Բլաքը նապէս կը թարգմանէ զայն. — «Յիմարութեան հնարքը յանձնաք մըն է», կամ «չար մտադրութիւնը մեղք է»: Իսկ իր մեկնութեան մէջ կ'ըսէ. «Յիմարը առնուած է հոս որպէս *ամբարիտ*, որ ոչ թէ միայն չար է իր գործքերուն մէջ, այլ սրտին իւրաքանչիւր խորհուրդը չար է, և, շարունակաբար այդպէս: Մեղքի մը կամ յիմարութեան մը մասին պարզ խորհուրդ մը մեղք չսեպուի որ այլ հնարք կամ մտադրութիւնը գէշ խորհուրդներու, և անոնց հիւրընկալութիւնը ոճիւր մըն է»:

Այս մեկնութիւնը ուղիղ իմաստ մը կը հանէ համարէն. «Մենք չենք

կրնար չխորհիլ իրերու վրայ, և մեր միտքը թելադրութեան օրէնքով կը գործէ», կ'ըսէ հեղինակ մը:

Մեր մտքէն կ'անցնին շատ մը խորհուրդներ, հաճելի կամ անհաճոյ: Պիտի ուզէինք արգիլել անհաճոյ և անմաքուր խորհուրդները, բայց մենք անկարող ենք մեր մտքին դուռը փակել անոնց առջեւ: Այսուամենայնիւ այդ գէշ խորհուրդներ չեն կրնար վընաս հասցնել մեր հոգւոյն եթէ չհիւրընկալենք զանոնք գէշ գիտաւորութեամբ մը: Մարդուն մէկը ըսած է. «Մեր գլխոյն վրայէն անցնող թըռչունները չենք կրնար արգիլել, սակայն, կրնանք արգիլել զանոնք մեր մտքերուն մէջ բոյն չինելէն»: Լաւագոյն կերպը սակայն սա՛ է, լեցուն և զբաղ պահենք մեր միտքը երկնային իրերով, վերի բաները մտածելով (Կող. 3:1-2) և ահա՛ յիմարական խորհուրդներ մեր մտքերուն մէջ տեղ պիտի չգտնեն:

Ս.

Երբ չենք կարող գործել, այդ պարագային լռել, տառապիլ և աղօթել՝ Աստուծոյ ընդունելի է: Երբ ընդունինք յուսախաբութիւն, հակասութիւն և կոպիտ խօսք մը ու համբերենք անոնց որպէս թէ իր ներկայութեանը, երկար աղօթքէ մը արժէքաւոր է անիկա: —Ֆէնելոն

ԱԼԼԱՀԸՆ ՄՈՒՀԱՊՊԵԹԻ

Տիւնեատա ատէմլէրին մուհապ-
պէթ գատար չօգ թագտիր էթտիքլէ-
րի պիր շէյ հօգ տըր: Բէնտինի սէ-
վէն պիր քիմսէսի օլմայան պիրինի
պանա կէօսթէր, պէն տէ սանա գաթ-
լընէֆա էթմէյէ չօգ հադլաշմը պիրինի
կէօսթէրէյիմ: Էյէր պու կիւն պիզ ա-
տէմլէրի Ալլահըն մուհապպէթ օլտու-
ղընա գանտըրապիլիւր իսէֆ, Անըն հա-
նընա չօգլար թօփլանսոմագլար: Ա-
րիստոտէլ, գատիմ ֆիլոսօֆ, տէմիշ
տիր: «Մուգապէլէթէն սէվիլմէյէրէֆ
սէվմէֆ, թոպիլթա պիւսպիւթիւն
մուսալիֆ պիր շէյ տիր»: Շէյթան Բի-
թապտան «Ալլահ մուհապպէթ տիր»
սէօգիւնիւ սիլմէֆ 'իսթէր: Ալթը պին
սէնէտէն պէրրի, Ալլահ մուհապպէթ
տէյիլ տիր տէյի ատէմլէրի գանտըր-
մաղա չալընըօր: Պաազըլար պուրա-
տա պիր հանլըն հափըյօրլար: Ալլահ
կիւնահքետրա զադապլանմըն տէյիլ,
իլլա կիւնահա գարըն զադապլանմըն
տըր, չիւնքի պու կիւնահ տըր քի
հայաթմըն վէ խոնէմիզ իւզէրինէ
ֆէլաֆէթ կէթիրիօր: Ալլահըն կիւ-
նահա գարըն զադապը, Անըն մուհապ-
պէթինէ պիր իսպաթ տըր: Պէնիմ պիր
օղլուլմ վար, ֆարզ էտէլիմ քի օ հան-
լըն հօլա սոփտըր Պու շէյ պէնի զա-
դապլանտըրըր, ֆադաթ օնու սէվտի-
յիմ իշիւն տիր քի զադապա թահրիֆ
օլտուլուլուլմ:

Վալիլիսէլէր քէնտի չօնուգլարընը,
տօղրու շէյ հափորլար իսէ Ալլահ
քէնտիլէրի սէվէր, հանլըն շէյ հափ-
տըղլարընտա սէվմէզ, տէյի թալիմ
էթմէլէրի տօղրու տէյիլ տիր: Վալի-
տէլէր չօնուգլարընըն հանլըն հօլտա
հիւրիւտիքլէրի իշիւն տնլէրէ պուղղ
էթմէզլէր: Խայր, օ տնլէրին մուհապ-

պէթինտէ պիր թէպտիլաթ մէյտանա
կէթիրմէզ, էօյլէ օլտա չօգ տէֆա մու-
մուհապպէթլէրինին տէյիլմէսի լա-
զըմ տըր: Պիր վազըթ վար իտի քի
հանլըն պիր զիւլմէն զահիպ իտիմ:
Տիւնիւնիւր իտիմ քի պէնի սէվէն
Բրիստոս տըր: Ալլահ իսէ քէնտի քիւր-
սիւսիւնտէ օթուլմըն պէօյիւք վէ սէրթ
պիր հիւքմտար կիպի տիր վէ պէնի
սէվմէզ: Ֆադաթ նէ զէման չօնուգ սա-
հիպի օլտուլմ իսէ օլ զէման պիրիճիք
օղլուլու վէրէճէֆ տէրէճէտէ տգիմ
պիր մուհապպէթ իլէ Ալլահըն պիզի
սէվտիլինի տնլատըմ:

Նէ գատար տա քէօթիւ պիրիսի
օլտան պիլճիւմլէ կիւնսիւրընա րաղ-
մէն Ալլահ հալա սէնի սէվէր: Օնա կէլ,
սէնի տալէթ էտիյօր քի կիւնահ իլէ
մէմլու պու տիւնեատա րահաթ պու-
լասըն:

Մուհապպէթ տայիմ թէնէզզիւլ
էտէր: Պիր վալիտէ քէնտի չօնուղընը,
տնըն քէնտինի սէվտիլինտէն զիյատէ
սէվէր: Պէն քէնտի չօնուգլարմըն տն-
լէրին պէնի սէվտիլինտէն չօգ զիյատէ
սէվէրիմ: Ալլահ պիզի պիզիմ Բէնտի-
նի սէվտիլիմիզտէն չօգ զիյատէ սէվէր:
Նէ զէման Գօլումպոս Ամիրիգայա ալագ
պոստը իսէ, վասի' պիր տիլար քէշֆ
էթմիշ օլտուղընու պիլմէզ իտի: Ա-
նըն կէնիշ ըրմագլարը, տէրէլէրի,
պէօյիւք կէօլլէրի հազընտա հիշ պիր
թէսալվուլուլու հօգ իտի: Տաղլարտա
մահֆուզ մատէնլէր հազընտա նէ'
պիլիւր իտի: Պէօյլէ տէ Ալլահըն մու-
հապպէթինի քէշֆ էթմէֆ իշիւն պիր
միւտտէթ ի էօմր լազըմ տըր, տնըն
տէրինլիլի հազընտա հիշ պիր շէյ
պիլմէյիզ, տնըն տիպինէ էնմէֆ իշիւն
էպէտիլէթ լազըմ տըր:

Պանոս սիւալ էթ քի նիշո՞ւն Ալ-լահը սէվէրիմ: Սիւալ էթ քի նիշո՞ւն կիւնէշ փարլար: Պէն Անը սէվմէմէք էտէմէմ: Ես. 38 տէ օգոսթոսեղ քի 0 կիւնահարըմըզըն ճիւմէսինի արգոսընսո աթմըշ տըր: Օրասը սէնին կիւնահարըն իշիւն էն էմին եէր տիր: Անլէր կիզլէնմիշտիրլէր, ճանըըն հիշ պիր տիւմէնի անլէրի պուլումուզ: Սէն անլէրի տէֆն էտէմէզսին, դօմշուլորընտան պաաղըլարը անլէրի պուլապիլիրլէր, պիր գըյամէթ կիւնիւ օլումուգ: Փաղթ էյէր Ալլահ անլէրի արգասընս աթմըշ իսէ, նէ գասար էմին սին: Պիր տէֆն Անըն արգասընս աթըլըգտան սօնրա Շէյթանն մէյտան էյէր անլէրի պուլապիլիր իսէ, տիւնետա պուլունան հէր ատէմէ մէյտան, էյէր կիտիպանլէրի պուլապիլիրլէր իսէ: Թէքրար օգոսթոսեղ քի շարգ զարպտան նէ գասար ուզուգ իսէ, Ալլահ կիւնահարըմըզ օ գասար ուզագ գըլտը: 0 նէ գասար ուզագ պիլմէմ: Էնլի իլմի հիյէթ տիյօրլար քի պասաղը եըլտըզլարըն նուրու հալս պիզէ եէթիշմէմիշ տիր, վազաս անլէր տաըրլարտան պէրի եօլմուլուգ էտիյօրլար սանիլէտէ 180,000 միլ սիւրոթ իլէ: Ալլահ կիւնահարըմըզ ալըպ տէնիզին տիպինէ աթմըշ տըր:

Տիւշիւնմէ քի կիւնահատն ազատ օլտուգտան սօնրա Ալլահն կէլմէլիսին: 0 թագտիրտէ խէլաս օլմաղը ասլա իւմիւտ էթմէ: Էյէր Քրիստոս գալպտէ իսէ, օ տէրունաէքի կիւնահարը մահվ էտէճէք, գաթէն օ մագսէտ իշիւն կէլտի: 0 արգու էտիյօր քի սանս հարաըմ վէ սէնի խէլաս էթմէյէ կէլմիշ իտիլինէ ինանուընս «Պիզի սէվիպ քէնտի գանըլլէ կիւնահարըմըգտան եըլգալանս էպէտ իւլապատ իզգէթ»: 0 պիզի օլտուգուըմը հալտէ սէվէր, վէ շիմտի պիզի եըլգամուգ արգու էտիյօր, թաքի Քէնտի տիյարընս միւնասիպ պիր մէվգիտէ օլալըմ:

Տ. Լ. ՄՈՒՏԻ

ԱԼԹՈՒՆ ՈՒՓԱՂԸ



1. Բուհանի Հայաթըն Ալալըզ

Բուհանի հայաթ Ալլահըն հուզուրընըն հագըն հիսսի, Անըն իլէ տէվումի ալալա տըր: Գալպ Ալլահըն սաքին օլումալը պիր հէյքէլ տիր: Ալլահըն տէրունիմիզտէ սաքին օլմասը պիզգաթ Քրիստոսըն հայաթընըն պիզտէ սաքին օլմասը տըր, վէ Քրիստոս գէմինտէ հալար իքէն տաիմս քէնտի Փէտէրինին հուզուրընտա հալար իտի: Պէյլէ պիր էօմր հագընտա Պօղոս սէյլէյիպ տէյօր, «վէ արթըգ պէն հալամայօրում, անագ Քրիստոս պէնտէ հալար» (Գալ. 2:20): Հէփ մուգատտէսլէր պէյլէ պիր էօմր հալամալը տըրլար, վէ անլէրին գուտսիլէթ հայաթընըն տէրէճէսի՝ անլէրին Ալլահ իլէ ալալալարընըն քէմալիլէթ ինսպէթինտէ տիր:

Ճան ճէսէտի ինս էթտիլի կիպի Քրիստոս անլէրին ճանընը ինս էտէր: Անլէր (մուգատտէսլէր) Քրիստոսու մուալլիմ, միւշիր վէ տէլիլ տէյի գալպուլ էտիպ հիշ պիր շէյի էվվէլա Անըն հուզուրընս արգ էթմէքսիզ, վէ Անըն հարաըմընը վէ հիւսնի ըրգասընը թալէպ էթմէքսիզ ինրա էթմէզլէր Քրիստոս անլէրին գուլվէթի, մէճաը, վէ միւտաֆիի տիր: Անլէր տաիմս Անս՝ քէնտիլէրին Փէտէրի, Մուհաֆըզը, վէ հէր գուլվէթէ մալիք Մէլիլի հալինտէ, իսթինտէն հալարլար: Պիր չօճուզըն մուհապպէթտէն, ֆագիրին՝ իշիյաճտան ճէլպ օլունտուղը կիպի Անս ճէլպ օլունուրլար: Պիր տամընէ միւիլէթ էթտիլի պիր քիմսէ թարաֆընտան տէլալէթ էտիլտիլի կիպի, անլէր Ալլահ թարաֆընտան տէլալէթ էտիլմէլէրի իշիւն Անս թէրքէտիլիրլէր: Անլէր պիր խասթանըն շիֆար

պուրմասը իջիւն հէքիմին էլինտէ զահ-
մէթ չէքմէյէ ըազի օլտուղը կիպի
Քէնտինտէն կէլէն հէր էլէմէ թէհամ-
միւլ էտէրլէր: Անլէր (եանի մուգատ-
տէսլէր) պիր չօճուղըն քէնտի վայի-
տէսինին կէօքսիւնէ տայանտըղը կի-
պի, Անա տայանըրլար: Պու իթիմատ
անլէրի էօմրիւն պիւճիւմլէ միւզայա-
գալարընտան թէրֆի էտէր:

Օնլարա հէր ֆէլաքէթ խապէթ
էտէպիլիր, հագգազլըզ եա գազա տօ-
լայըսըլէ մալ վէ միւլքտէն, էօլիւմ
տօլայըսըլէ՝ տօթլարտան, իֆթիրի
տօլայըսըլէ՝ շէրէֆ ու իզլէթտէն,
միւհիլիք խաթթալըզ տօլայըսըլէ՝ սըհ-
հէթտէն, աղըր թէճրիպէլէր տօլայը-

սըլլէ՝ սաատէթտէն մահրոււմ էտիլէպի-
լիրլէր... Օհ, պիւա շիւպհէ անլէր պու
նէվ թէճրիպէլէրէ կիրիֆթար օլաճագ-
լար, աճը կէօզ եաշլարը տէօքէճէք-
լէր, պոռնուլէ պէրապէր Ալլահըն ազլ-
տան իւսթիւն օլտն սէլամէթի անլէր-
տէ պագի գալաճագ: Պու շէլլէրին Ալ-
լահ թարաֆընտան վուգու պուլտու-
ղունը, վէ իլահի էլիլլէ թէրթիպէ-
տիլտիլինի անլէր ֆէհմ էտէրէք, «եա-
րապպ հէր շէյի զայպ էթտիք, լաքին
հալա Սանա մալիքիզ, Սէն իսէ հէր
շէյէ քեաֆի սին» տէյէրէք նիտա է-
տէճէքլէր:

ԵՐԷՅ

ԷՊԷՏԻՅԵԹԻՆԻ ՆԷՐԷՏԷ ՍԱՐՔ ԷՏԷՃԷՔՍԻՆ

«ԷՊԷՏԷԼԻՔ» լուղէթի հէր ֆիքիր-
տէն, ճիւմլէ խայալտան վէ հէր թա-
րիֆթէն պիհուտուտ տէրէճէ ելւքաէք,
հէյպէթլի վէ զիյաւտէսիլլէ վազարլը,
վէ գօրգուլու պիր լուղէթ տիր: Անը
հա՛նկը ֆանի ինսան ֆէհմ էտէպիլիր:
Տահա աճալպի պու տուր քի չօգլար
անըն հէման քէնարընտա տուրմագտա
վէ պիր անտէ անըն իչինտէ օլաճագ
իքէն, հալա օ հագգատա պիւսպիւթիւն
պիգայտ վէ վազիֆէսիզ եաշլարլար
վէ էօմրլէրինին պու կիտիլի իլէ,
կէօթէրիյօրլար քի հէր ազլը և իտ-
լաքը քեաթիլէն զայպ էթմիլլէր:

Պիր խանըմ պիր տէֆա կիւնիւն
պէօյիւք գըսմընը քեաղըտ օյնայարագ
վէ տիւնեալի արգատաշլար իլէ քէյֆ
էտէրէք կէչիրմիլ իտի: Խանէսինէ
տէօնտիւլիւնտէ պագտըքի քէնտինին
խըտմէթ քեարըր ուհանի պիր քիթապ
օգուլօր: Մէրգոււմէ արգատան էյիլիպ
քիթապա պագարագ անա տէտի: «Պի-
չարէ գըզ, պու քիթապըն իւզէրինէ
տիւշէրէք պէօյլէ ուզուլ վագըտ օգու-

մագտան նէ՞ քէյֆ տուլարսըն»: Օ կէճէ
օ խանըմ ուշուլումատը: Մէրգոււմէ կէ-
ճէնին սաաթլարընը ահ չէքէրէք, ֆի-
ղան էտէրէք վէ չօգ կէօզ եաշլարը
տէօքէրէք կէչիրիյօր իտի: Խըտմէթ-
քեարըր սէպէպինի անլամագ իչիւն
թէքրար թէքրար սուալէթտի, լաքին
ճէվապ եօգ իտի: Էնճամ սէյլ կիպի
կէօզ եաշլարը տէօքէրէք տէտի: «Ահ,
օգուտուղուն քիթապտա պիր լուղէթ
կէօրտիւմ: Օ լուղէթ պէնի ալթ իւսթ
էտիյօր: Կէօրտիւլիւմ էՊԷՏԷԼԻՔ լու-
ղէթի իտի: Ահ, էպէտէլիք իչիւն հա-
զըրլանմըչ օլտամ, նէ՞ գատար մէս-
րուր օլաճագ իտիմ»: Մէրգոււմէ օ
կիւնտէն պաշլտեարագ հէփ օյուլարը
վէ տիւնեալի արգատաշլարը պրագտը,
վէ Րապպը վէ խէլաա եօլունը ճիտտի-
յէթլէ տրամաղա պաշլարըպ, էհ ի
թագվա վէ փէք տիւտար պիրիսի օլ-
տու: ԷՊԷՏԷԼԻՔ հագգընտա տիւշիւն-
մէքլիք անը ուշանալըտը:

Ֆրանսիզ Նիւբօրթ նաւ տինսիզ
վէֆաթ էտէր իքէն պէօյլէ տէմիլ տիր:

«Ահ, քեանկի Ալլահ իլէ պարըշապիլմէք վէ Անըն լուծֆընա նաիլ օլապիլմէք իչիւն օ սէօնմէզ աթէշ իւզէրինտէ պին սէնէ եանմագ պանն իհսան օլուէա իտիւ Լաքին նաֆիլէ տուգու Միլիօնլարճա միլիօն սէնէլէր պէնի ազապըմըն սօնընա, պիր սաաթտան զիյատէ եազլաշարմագլար Էյ էպէտիլիք, էպէտիլիք, էպէտիլիյին կիրտապընը քիմ թէֆթիշ էտիպիլիւր իլէլէՊէՏ լուզէթինին տէրինլիքլէ-

րինի քիմ էօլչէպիլիւր» Մէրգուճ պէօյլէ տէյերէք կիթտիւ Բրիստոսըզ, Ալլահսըզ, իւմիասիզ, նուրսըզ վէ թէսէլլիսիզ վէ սէլաւէթսիզ էպէտիլիք նէ՛ հէյպէթլի շէյ տիր Է՛ն օզուլսն սէն պու շէյլէրի տիւշիւնիւրմ իւսիւն ։ Ապ սօնրա էօլիւմ կէլիւր վէ էպէտիլիյին գափուսը սանա տախի աշըլըր վէ սէնտէ օրալա կէչէրսին ։ Օրատա հալին նէ՛ օլամագ ։

ՓԷՏԷՐ, ՊԵՆԻ ԱԼ

Քիւշիւք պիր գըզմողըզ. էօլիւմ եաթաղընտա իքէն շէօյլէ տէտի «Փէսէր, պէնի ալ» ։ Փէտէր քի գըզընըն պաշը եանընտա պէքլէմէքտէ իտի, տէրնալ գըզընը գուճաղընա ալտը ֆաթաթ գըզ՝ «Խայր, Սէմալի Փէտէրիմէ տէյօրըմ» տէյերէք եաթաղը իւզէրինթէսլիմ ի բուհ էթտիւ Էվլէթ սէմալի Փէտէրի անը եանընա ալտը նէ աճաիպ թէէմինաթ ։

ԷՎՎԷԼԱ. ԵԱՐԱՆԱ. ՊԱԳ

Մէշուր պիր ճէրրան ամէլիէթ էտէճէյի խասթալա խիթապէն շէօյլէ տէր իտի «Տօսթուճ, շիմտի Էվլէլա քէնտի եարանա պագ վէ սօնրա պանա պագ» ։ Թամ պէօյլէ տախի Բրիստոս կիւնահքեարա տէր, «Էյ կիւնահքեար ճան, Էվլէլա քէնտի կիւնահընա պագ վէ սօնրա պանա նազուր գըլ, պէն սէնի կիւնահլարընտան խէլաս էտիպ ճանընա սէլամէթ վէրիւրիմ» ։

ՇԷՐ ՇԷՅԻՆ ԷՆ ԱԶԻՄԻ

1. Պէնիւմ էն ազիւմ զայաթըմ.— Ճանըմըն զայ օլմասը տըր
2. » » » քեարըմ.— » խէլաս » »
3. » » » մագսէտիւմ.— Ալլահը իզզէթլէմէք »
4. » » » միւքեաֆաթըմ.— Ճէլալ թաճընա մալիք օլմագ
5. » » » իշիւմ.— Բրիստոսա ճանլար գազանմագ
6. » » » մէսէրրէթիւմ.— Իսմիւրն Սէմալաթտա
գայա օլուհմասը տըր
7. » » » միրասըմ.— Սէմալաթ վէ անըն ճէլալը տըր
8. » » » իմթիյաղըմ.— Էվլատ Ուլլահ օլմագ տըր
9. » » » իւմիւտիւմ.— Բրիստոսըն իքինճի զուհուրը վէ
էպէտի հայաթ տըր
10. » » » իհմալիյէթիւմ.— Պէօյլէ ազիւմ խէլասը իհմալ էթմէք տիր

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ ԿՐՕՆԱԿԱՆ ԱԾԽԱՐՅԷ

1938ին Զինատանի մէջ Սր. Գիրքի երեք ընկերութեանց կողմէ շրջանի գրուած Սր. Գրոց թիւը հետեւեալն է.— Բրիտանական ընկերութեան կողմէ՝ 2,093,274, Սկովտիոյ Ազգ. Սր. Գրքի ընկերութեան կողմէ՝ 1,483,399, Ամերիկեան ընկերութեան կողմէ՝ 1,395,315, ընդհանուր գումար՝ 4,972,988:

*. Լոնտոնի Պարպիկան հրէական միսիոնարութեան տնօրէնը կը գրէ հետեւեալը.— «Եթէ ըսեմ ձեզի թիւը մկրտուիլ պահանջող հրեաներուն, թե՛րեւս պիտի խորհիք թէ կը չափազանցեմ, սակայն կը վստահացնեմ ձեզ թէ ինչ որ կը գրեմ ճշմարիտ է: Շփման մէջ եմ 12000-15000 հրեաներու հետ որոնք մկրտուիլ կը փափաքին: Ամէն օր կը սորվեցնեմ հարիւրաւորներու, երբեմն ամբողջ օրը առանց ուտելու կ'անցնեմ:

*. Օլսոնի Եպիսկոպոս Կէռլյուս կ'ըսէ, «Անցած հարիւր տարիներէ ի վեր՝ Նորվեկիոյ մէջ, ժողովուրդին կողմէ Աւետարանի համար այսպիսի ընդունելութիւն չէ տեսնուած: Կը տեղեկագրէ թէ՛ Աւետարանի հանդէպ նպաստաւոր դիրք մը կայ գործաւոր դասակարգին մէջ, հակադրաբար անցեալի աննպաստ ձգտումին հետ:

*. Երիցական եկեղեցւոյն պատկանող տիկին մը, Ուիկկինգ անունով, Ամերիկա, չէ ուզած որ երբ մեռնի բարեկամները ծաղիկներ բերեն իր յուղարկաւորութեան հանդէսին: Ինքը եռանդուն քրիստոնեայ գործիչ մըն էր, և իր փափաքն էր ծաղիկներու համար ծախսուելիք գումարը Տէ-

րոջը գործին յատկացուի, հետեւաբար փոխան ծաղկեպսակներու անոնք Սր. Գիրք նուիրեն: Երբ Տիկ. Ուիկկինգ մօտեւս մեռաւ, իր բարեկամներուն կողմէ զրկուած են նուազագոյն 2000 օրինակ Սր. Գիրք, որոնք կը կազմեն յարգանքի արժանի տուրք մը իր յիշատակին: Ծաղիկներ կը թաւաւորին շուտով և կը չորնան քանի մը օրէն, իսկ Սր. Գիրքը կը մնայ ոչ թէ միայն իբրեւ միսիոնարիչ խօսք, այլ շատերուն համար կ'ըլլայ փրկութեան և և յուստենտկան կեանքի պատճառ: Անոնք բաժնուեցան զանազուն դպրոցներու և միսիոնարական դաշտերու մէջ: Տէրը կ'ըսէ թէ մենք դիզենք մեր գանձերը երկինքի մէջ:

*. Ըստ «Ճիւլիշ Գրօնիքլ» թերթին՝ հրեայ փաստաբան մը, Հռոմ, իտալական բանակին նախկին սպաներէն, Սինյօր Ազգօ, արգիւրուած է իր փաստաբանի պաշտօնը կատարելէ, պարզապէս անոր համար որ իր գործածած թուղթերը գլխադրուած են «Ճեմար-սուքիւնը պիտի յաղթանակէ» նշանաբանով: Կառավարական պաշտօնական թերթը «Փօփոլօ Տ'իթալիա» զոյն հրատարակած է որպէս զրգուիչ նշանաբան մը ֆաշիստութեան դէմ: Հետեւաբար Սինյօր Ազգօ, զրկուած է իր փաստաբանի արհեստը ի գործ դնելէ:

*. Մահովք ըսուած պատմական հովիտի մը մէջ հետեւեալը գրուած է.— «Յիսուս ըսաւ, ես եմ ճամբան, ճշմարտութիւնը և կեանքը:—

«Առանց ճամբու՝ երթիլ չկայ, Առանց ճշմարտութեան՝ գիտնալ չկայ, Առանց կեանքի՝ ապրիլ չկայ»:

ՆՈՒՐԱՏՈՒՌՈՒԹԻՒՆՆԵՐ

Եղբ. Մ. Մեղքոնեան 10 Ե. Դ. կը նուիրէ «Աւետ. Ձայն»ի ֆօն-տին մանչ զաւակ մը ունենալու բարեբաւարիկ առթիւ, առ ի խըն-դակցութիւն:

Մեր շնորհաւորութիւնները:

ԿԱՐԵՒՈՐ Է

Անոնք որոնք «Աւետ. Ձայն» թերթը կ'աւանդեն առանց որ իրենք ուզեն, կը նշանակէ թէ մեր կողմէ զրկուած է: Դիմած ենք իրենց բարեացակամութեան որպէսզի քաջալերեն զայն: Մէկուն կողմէ նը-ւէր ըլլալու պարագային՝ մենք կը յիշենք զայն թերթիս մէջ:

ԹԵՐԹԻՍ ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆՆ Է

Եգիպտոս՝	25 Ե. դ.
Ամերիկա՝	1 $\frac{1}{2}$ տար
Ֆրանսա եւ Սիւրիա՝	30 Ֆրանգ

Նկատի ունենալով մեր հայրենակիցներէն ոմանց նիւթական ան-ձուկ վիճակը, յօծար ենք այդպիսիներուն գեղչեալ գնով մը զրկել թերթը, եթէ առ այդ մեզի իմացնեն անձամբ կամ մեր գործակալի միջոցաւ:

ՄԵՐ ԲՈՎԸ ԿԸ ԳՏՆՈՒՆ ՇԵՏԵՒԵԱԼ ԳՐԲՈՅԿՆԵՐԸ

1. Չարլի Գըլզըն	24 էջ	Գին՝	1 Ե. դ.
2. Սամուէլ Մօրիս	32 "	"	1 Ե. դ.
3. Գործի Պիղատոսի	24 "	"	1 Ե. դ.
4. Իգնատիոս	20 "	"	կես Ե. դ.

Վերոյիշեալ գրքիկները հանելի, խիստ հետաքրքրաւոր եւ հոգե-ժողովն պատմութիւններ են: Դիմել խմբագրութեան հասցեին:

Ուշադրութիւն.— Բոլոր դրամական առաւումներ, յօդուածներ եւ քղապագու-թիւնք պէտք է հասցեագրուին հետեւեալ կերպով.—

K. T. SARIAN
2, Rue Ahmed Pacha Hasanen,
Shoubra, Cairo (Egypt).

PRINTED IN EGYPT BY
SAHAG MESROB PRESS,
25, SHARIA JEWFIK CAIRO.